ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Յունիբանկ» ԲԲԸ 2018թ. գործունեության վերաբերյալ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ներկայացնել Յունիբանկի նախորդ տարվա գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվությունը:

2018թ. Յունիբանկը շարունակել է դինամիկ կերպով զարգացնել ռազմավարական կարևորություն ունեցող բիզնես ուղղությունները՝ ամրապնդելով իր դիրքերը փոքր բիզնեսի և մանրածախ սեգմենտի հաճախորդների սպասարկման ոլորտում, ներդրումային ծառայությունների շուկայում:
Առանձնահատուկ ուշադրության են արժանացել խնդրահարույց պարտավորությունների կրճատման, ակտիվների որակի բարելավման և ռիսկերի կառավարման ոլորտները:

<u>Առանցքային իրադարձություններ</u>

- ✓ Moody's միջազգային վարկանշային գործակալությունը պահպանել է Յունիբանկի դրամային և արտարժութային երկարաժամկետ ավանդների վարկանիշը B2 մակարդակում՝ «կայուն» հեռանկարով:
  Բազային վարկային գնահատականը սահմանված է b3:
- ✓ Unibank Prive-ն արժանացել է մրցանակի SPEAR'S Russia Wealth Management Awards 2018 մրցանակաբաշխությունում՝ ԱՊՀ երկրներում Private banking ոլորտում հաճախորդների լավագույն սպասարկում կազմակերպելու համար:
- ✓ Իրականացվել է պարտատոմսերի հինգ թողարկումների տեղաբաշխում 1.25 մլրդ ՀՀ դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով, ինչը վկայում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության բարձր մակարդակի մասին:
  Յունիբանկի պարտատոմսերը ցուցակված են NASDAQ OMX Armenia ֆոնդային բորսայում (ներկայումս՝ Հայաստանի Ֆոնդային Բորսա):
- ✓ FMO Հոլանդական զարգացման բանկը տրամադրել է Յունիբանկին 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոց՝ <Կանայք բիզնեսում> ծրագրի իրականացման համար:
- ✓ Տեխնոլոգիական բազայի կատարելագործման շրջանակներում կրճատվել են թիրախային ոլորտների վարկավորման գործընթացի ժամկետները, մշակվել և իրականացվել են ռիսկերի նվազեցման ուղղությամբ միջոցառումներ:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

Ամփոփելով նախորդ տարվա արդյունքները՝ կցանկանայի նշել, որ Յունիբանկը զգալի առաջընթաց է արձանագրել բիզնեսի առաջնահերթ ուղղությունների զարգացման գծով՝ շահույթի պլանը կատարելով 100%-ով:

Հաշվետու տարվա արդյունքներով, համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների՝

- ✓ **ԱԿՏԻՎՆԵՐՆ** աճել են 7 մլրդ դրամով և կազմել են 209.8 մլրդ դրամ:
- ✓ **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** կազմել են 134.3 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 64%-ը: ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 54%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է 10.8% տարեկան:

- ✓ **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ծավալը կազմել է 177.3 մլրդ դրամ՝ աճելով 9.9 մլրդ դրամով:
- ✓ **ԱՎԱՆԴՆԵՐԻ** պորտֆելը կազմել է 151.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18%-ով: Վերջինս հիմնականում ապահովվել է իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ միջոցների հաշվին:
  Ընդհանուր պարտավորությունների գծով ֆինանսավորման արժեքը նվազել է 1.9 տոկոսային կետով:
  Թողարկված պարտատոմսերի պորտֆելն աճել է 3.4 մլրդ դրամով՝ հասնելով 8.6 մլրդ դրամի:
- ✓ **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 10.5 մլրդ դրամ, զուտ տոկոսային մարժան կազմել է 6% տարեկան, գերազանցելով 2017թ. համապատասխան ցուցանիշը 0.6 տոկոսային կետով, ի հաշիվ ժամկետային ավանդների պորտֆելի ծավալի և ներգրաված միջոցների ծախսատարության նվազման:
- ✓ **ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 4.2 մլրդ դրամ, աճը՝ 43%-ով: Որպես տրանզակցիոն բիզնեսի ծավալների ավելացման ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունք, զուտ կոմիսիոն եկամուտն աճել է 204%-ով՝ կազմելով 1.8 մլրդ դրամ:
- ✓ **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 7 մլրդ դրամ, ինչը 12%-ով գերազանցում է 2017թ. համանման ցուցանիշը:
- ✓ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 32.5 մլրդ դրամ: Տարեվերջի դրությամբ կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 14.5%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն մակարդակը (12%):
- ✓ **ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 931.3 մլն դրամ, նախորդ տարվա 67.6 մլն դրամի դիմաց: Կցանկանայի նշել, որ հաշվետու տարում արձանագրված շահույթի բացարձակ մեծությունը, ինչպես նաև շահութաբերության հարաբերական ցուցանիշները լավագույնն են Բանկի պատմության վերջին 6 տարիների ընթացքում:

<u>Մանրածախ բիզնես</u>

Մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված էր գործիքակազմի կատարելագործմանը, բիզնես գործընթացների օպտիմալացմանը, հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման միջոցով սպասարկման որակի բարձրացմանը:

Մանրածախ վարկային պորտֆելի ծավալը 2017թ. համեմատ աճել է 10.1 մլրդ դրամով, կամ 15%-ով և կազմել՝ 77.6 մլրդ դրամ: 2018թ. մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը կազմել է 13.6%՝ նվազելով 3.2 տոկոսային կետով:

Վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ կենտրոնական բանկի քաղաքականության շրջանակներում Բանկն առաջարկել է հաճախորդներին առավել գրավիչ պայմաններ: Կայուն աճ արձանագրվել է ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման համար սպառողական վարկերի, ոսկու գրավով վարկերի գծով:
Սպառողական վարկի տրամադրման առցանց հայտերի քանակը տարվա ընթացքում կազմել է 20.510 հատ՝ 10.7 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից հաստատվել է թվով 5.535 վարկ՝ 1.9 մլրդ դրամ ընդհանուր գումարով:
Սպասարկող կետերում շրջանառության ծավալը գերազանցել է 63.9 մլրդ դրամը, որից 50.5 մլրդ դրամ՝ բանկոմատներում:

Բանկը շարունակել է ֆինանսավորման արժեքի նվազեցման քաղաքականությունը՝ ժամկետային ավանդների համար սահմանելով չափավոր տոկոսադրույքներ: Ավանդային պորտֆելը տարեսկզբից նվազել է 5%-ով, կամ 4.5 մլրդ դրամով և կազմել է 87.8 մլրդ դրամ: 67%-ով աճել է Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի պորտֆելը՝ հասնելով 8.6 մլրդ դրամի:

Ոչ ֆինանսական ծառայությունների գծով հաճախորդների կարիքները բավարարելու նպատակով Յունիբանկը հաշվետու տարում գործարկել է պետական մարմինների որոշ

գործառույթների իրականացման ծրագիրը: Ակտիվ զարգացել են նաև Private banking ծառայությունները:

Մանրածախ բիզնեսի գծով շահույթը 2018թ. կազմել է գրեթե 1.4 մլրդ դրամ:

Կորպորատիվ բիզնես

Միկրո և փոքր բիզնեսի զարգացման ռազմավարությանը համահունչ, 2018թ. ընթացքում Յունիբանկը շարունակել է ակտիվ քայլերը՝ նպատակաուղղված հիշյալ սեգմենտի համար վարկային միջոցների հասանելիության բարձրացմանը: Կենտրոնանալով թիրախային սեգմենտների վրա՝ կորպորատիվ բիզնեսի ստորաբաժանման ջանքերն ակտիվորեն ուղղված էին շինարարության, սպասարկման ոլորտների, այդ թվում հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի ֆինանասավորմանը:

Բիզնես վարկերի ծավալը կազմել է 70.7 մլրդ դրամ, կամ վարկային պորտֆելի 48%-ը: Կորպորատիվ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2018թ. նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել է 11.7% տարեկան:

Հայաստանի Հանրապետությունում կանանց ձեռներեցության աջակցման նպատակով FMO Հոլանդական զարգացման բանկի հետ կնքվել է վարկային ռեսուրսների տրամադրման պայմանագիր՝ 10 մլն ԱՄՆ դոլար գումարով:

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ կնքվել է տնտեսվարող սուբյեկտների վարկավորման համաձայնագիր՝ արտահանմանը խթանելու և նոր շուկաներ դուրս գալու նպատակով:

Շարունակվել է համագործակցությունը KfW գերմանական բանկի հետ, որի ֆինանսավորմամբ ներդրվել է որպես էներգիայի այլընտրանքային աղբյուր արևային էլեկտրակայանների ձեռքբերման համար նախատեսված վարկային գործիքը:

Մշակվել և ներդրվել են պարզեցված մրցունակ վարկային գործիքներ:

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը տարեսզբից աճել է 12%-ով և կազմել՝ 20.4 մլրդ դրամ: Զգալի աճ է արձանագրվել իրավաբանական անձանց ցպահանջ միջոցների պորտֆելի գծով՝ 24.7 մլրդ դրամով, պորտֆելը կազմել է 31.7 մլրդ դրամ:

Հաճախորդների միջազգային վճարումների գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով Բանկը զգալի ընդլայնել է թղթակցային հարաբերությունների ցանցը առաջատար արտասահմանյան բանկերի հետ:

Կորպորատիվ բիզնեսի գծով շահույթը 2018թ. կազմել է 631 մլն դրամ:

Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

Տարեվերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 46 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 80 պրոմո կետ , 116 բանկոմատ,136 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը:

Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 356.000 հաճախորդների, որից 353.000՝ մանրածախ:

Կորպորատիվ կառավարում

Տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Խորհրդի և Վարչության միջև արդյունավետ փոխգործակցությունը թույլ է տվել օպերատիվ լուծում տալ Բանկի գործունեության հետ կապված հարցերին: 2018թ. ընթացքում կայացել է՝

Խորհրդին կից հանձնաժողովների՝

- Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողովի 6 նիստ

- Ներդրումային հանձնաժողովի 33 նիստ
- Պարգևատրումների հանձնաժողովի 1 նիստ

Վարչությանը կից հանձնաժողովների՝

- Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողովի 44 նիստ
- Սակագնային հանձնաժողովի 6 նիստ
- Անձնակազմի գնահատման հանձնաժողովի 14 նիստ
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողովի 5 նիստ
- Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովի 9 նիստ

Ակտիվ գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն և Տենդերային/մրցութային կոմիտեն: Վերջիններս տարվա ընթացքում անց են կացրել համապատասխանաբար 18, 70 և 73 նիստ:

<u>Կադրային քաղաքականություն</u>

2018թ. Բանկի կադրային քաղաքականությունը միտված էր աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացմանը, ներկորպորատիվ մշակույթի զարգացմանը, թափուր աշխատատեղերի համալրմանը որակավորված մասնագետների ներգրավման և փորձնակների ուսուցման արդյունքում:

Աշխատանքներ են տարվել մոտիվացիոն համակարգի կատարելագործման, այդ թվում՝ աշխատակիցների ոչ նյութական խրախուսման ուղղությամբ, անձնակազմի առանձին խմբերի համար ներդրվել է բժշկական ապահովագրության ծրագիր:

31.12.2018թ. դրությամբ Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 763 մարդ:

<u>ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխանությունը</u>

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների և թերացումների վերացման և ապագայում դրանց բացառման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ, համաձայն սահմանված ժամանակացույցի: Մեկ խախտման դեպքում Բանկի նկատմամբ կիրառվել է տուգանք 100 հազար ՀՀ դրամ գումարի չափով:

2018թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված Բանկի գործունեության նպատակային ստուգման արդյունքում մշակվել է անհամապատասխանությունների և խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր: Կենտրոնական բանկի կողմից այն հաստատվելուց հետո Բանկի ղեկավարությունը խիստ վերահսկողություն կիրականացնի միջոցառումների ծրագրի պատշաճ կատարման նկատմամբ:

<u>2019թ. ռազմավարական առաջնահերթությունները</u>

Բանկի ղեկավարության կողմից սահմանվել են 2019թ. զարգազման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- ✓ գործիքակազմի և մատուցվող ծառայությունների ընդլայնում և կատարելագործում, բարձր եկամտաբեր ուղղությունների զարգացում,
- ✓ քարտային բիզնեսի զարգացում,
- ✓ հաճախորդների որակյալ սպասարկման ապահովում, հեռահար սպասարկման ուղիների զարգացում,
- ✓ մասնաճյուղային ցանցի ընդլայնում բիզնեսի համար առավել հեռանկարային քաղաքներում և շրջաններում,
- ✓ տեխնոլոգիական բազայի մոդերնիզացում,
- ✓ Ռուսական ֆոնդային շուկա դուրս գալը,
- ✓ ֆինանսական արդյունավետության ապահովում և բանկային համակարգում Յունիբանկի դիրքի բարելավում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:

Վերոնշյալ խնդիրների հաջող իրականացման դեպքում Բանկի շահույթը 2019թ. վերջին կկազմի 2.4 մլրդ դրամ:

Ավարտելով ելույթս, կցանկանայի երախտագիտության ջերմ խոսքեր ուղղել Բանկի բաժնետերերին՝ վստահության և աջակցության համար, Բանկի հաճախորդներին և

գործընկերներին՝ հավատարմության և փոխշահավետ համագործակցության համար, Յունիբանկի աշխատակիցների թիմին՝ նվիրված և որակյալ աշխատանքի համար:

«Յունիբանկ» ԲԲԸ Վարչության անունից՝

Մեսրոպ Հակոբյան

Վարչության նախագահ